## «ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

1977 թ. վերջին լրացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդեսի» հիմնադրման 20 տարին։ Այդ ժամանակաշրջանում լույս է տեսել պարբերականի 79 համար, որոնք պարունակում են շուրջ 2300 նյութեր՝ հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, գրախոսություններ և այլն։

1968 թ. հրատարակվեց «Հանդեսի» 10 տարվա մատենագիտական ցանկը (տե՛ս «Հանդեսի» 1968 թ. № 4-ի հավելվածը)։ Այժմ պատրաստված է նաև պարբերականի 20 տարվա մատենագիտությունը, որը բաղկացած է երկու բաժիններից՝ նյութերի սիստեմավորված ցանկից և հեղինակների անվանացանկից։ Որպես հավելված տրված է «Հանդեսի» 1958—1977 թթ. համարների բովանդակությունը՝ ժամանակագրական կարգով։

Խմբագրությունը նպատակահարմար գտավ «Հանդեսի» ներկա համարը հատկացնել մատենագիտական այդ ցանկին։

Մատենագիտական ցանկը հրատարակվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ։

## ОТ РЕДАКЦИИ «ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОГО ЖУРНАЛА»

*В конце 1977 г. исполнилось 20 лет со дня основания «Историко-филологического журнала» Академии наук АрмССР. За это время вышло в свет 79 номеров журнала, которые содержат около 2300 статей, сообщений, публикаций, рецензий и других материалов.*

*В 1968 г. был опубликован указатель содержания журнала за 10 лет (см. приложение к № 4 за 1968 г.). В настоящее время подготовлена библиография материалов, помещенных в журнале за 20 лет. Она состоит из систематического указателя и указателя имен авторов. В качестве приложения приводится содержание номеров журнала за 1958—1977 гг. в хронологическом порядке.*

*Редакция сочла целесообразным посвятить данный номер журнала этой библиографии.*

*Библиографический указатель публикуется по решению Президиума Академии наук АрмССР.*